



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀՆՆՆԱՐԱՆՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Կարևոր է գիտակցել և հիշել, որ լրագրողների ֆիզիկական անվտանգությունը լրագրողական աշխատանքի հաջող ավարտի առաջին նախապայմանն է:



Անվտանգության հարցում մանրուքներ չկան և ամեն ինչ կարևոր է՝ սկսած խմբագրությունում հանձնարարության ձևակերպման պահից մինչև լրագրողի աշխատանքի ավարտը:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՍԵՂԻԱՍԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ՀԻՇՆՔ, ՈՐ ԿՅԱՆՔԸ ՍՎԵԼԻ ԹԱՆԿ Է, ԲԱՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԸ

📞 112 🌐 rescue.mia.gov.am



ՀԱՄԱՅՈՒՆՆԱԿՎՈՐՄԸ Է ՄԱԿ-Ի ՓՈԽՍԱՎԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՎՈՐՅՈՒՅՆ ԵՎ ԵԱՐՊՈՎԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԸ



Co-funded by
European Union
Humanitarian Aid

ՑԻՋԻԿԱԿԱՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄՊԱՅՈՎՈՒՄ

Վտանգավոր հանձնարարության մեկնելիս հարկավոր է.

- անցկացնել ուղևորության վերաբերյալ խորհրդակցություն, մշակել հաղորդակցության պլան, հավաստիանալ, որ բոլորը տեղեկացված են ծրագրերի, չնախատեսված դեպքերի ու ընթացակարգերի մասին, ստուգել անվտանգության իրավիճակը, սպահովել, որ խմբագրությունում գտնե մեկ մարդ մշտապես տեղյակ լինի Ձեր գտնվելու վայրի մասին:
- Ունեցե՞ք գործողությունների հիմնական և այլընտրանքային պլան (պլան B):
- Թիմի այլ անդամների հետ (լուսանկարիչ, օպերատոր, պրոդյուսեր և այլք) նախատես որոշե՞ք ապագա հանդիպման վայրը, եթե միմյանց «կորցնե՞ք»:
- Եթե ձեզ հետ դեպք է պատահել, այդ մասին հաղորդելիս անպայման նշե՞ք, թե ո՞վ եք, որտեղ եք, ինչ է պատահել, ինչ քայլեր եք ձեռնարկել և ինչի կարիք ունեք:

Երկրաշարժի ժամանակ

- Չի կարելի մուտք գործել այնպիսի շենքեր, որտեղ փլուզման վտանգ կա:
- Խուսափե՞ք փրկարարական աշխատանքներ կատարելուց. եթե դրա ծայրահեղ անհրաժեշտությունը չկա, ավելի լավ է թողնե՞ք այդ գործը մասնագետներին:
- Փողոցներում քայլելիս ուշադիր եղե՞ք, որպեսզի որևէ փլուզված շենքից պատահաբար բեկորներ չընկնեն ձեզ վրա:
- Աշխատելիս պահպանե՞ք որոշակի հեռավորություն շենքերից. այդպես և անվտանգ վիճակում կլինե՞ք, և չեք խանգարի աշխատող փրկարարներին:
- Անհրաժեշտ է կրել սաղավարտ, շնչադիմակ ու ակնոց՝ փոշուց, ծխից և այլ մանր մասնիկներից պաշտպանվելու համար:

Անտառային հրդեհի ժամանակ

- Հեռու մնացե՞ք կրակից, այրվող ծառերից:
- Ուշադիր եղե՞ք շրջապատի նկատմամբ, քանի որ նույնիսկ քամու ուղղության պարզ փոփոխությունից կրակի տարածման ուղղությունը ևս կարող է փոխվել:
- Պարտադիր ունեցե՞ք հակազագ և շնչադիմակ կամ գոնե համապատասխան թաշկինակ՝ ծխից պաշտպանվելու համար,
- Կրե՞ք կրակադիմացկուն նյութից պատրաստված հագուստ,
- Միշտ ունեցե՞ք այրվածքների դեմ դեղամիջոցներ ու քսուքներ:

Սողանքի ժամանակ

- Հեռու մնացե՞ք վտանգավոր գոտուց:
- Պահպանե՞ք անվտանգության կանոնները:

ԱՆՅԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԻԳՆՏՆԵՐ

Աղետի գոտի մեկնելը պահանջում է ոչ միայն մասնագիտական, ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածություն, այլև որոշակի «իրային» ապահովվածություն:



Խիստ անհրաժեշտ և կարևոր իրեր, որ լրագրողն իր հետ պետք է ունենա՝

- ✓ Ամուր և հարմարավետ հագուստ
- ✓ Ուսապարկ
- ✓ Սաղավարտ
- ✓ Կապի միջոցներ
- ✓ Առաջին բժշկական օգնության դեղարկղիկ
- ✓ Հակազագ, շնչադիմակ, աչքերը պաշտպանելու միջոց
- ✓ Գրպանի լապտեր, փոքրիկ կրակմարիչ
- ✓ Քարտեզ, կողմնացույց գրպանի

